

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ-Ի ԷԿՈՒՄԵՆԻԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

«Միութիւն՝ ի կարեւորս,  
Ազատութիւն՝ յերկբայականս,  
Սէր՝ յամենայնի»:

Հնդիանրական Եկեղեցու հայրերի հետևողությամբ Ծնորհալի Հայրապետի ընդհանրացնող այս ձևակերպումը, որն իր կարևորությամբ և քրիստոնեական ճշշմարիտ ոգով կանխում է նոյմանիկ արդի էկումենիկ երկխոսությունների ձևոքերումները, դարեր շարունակ հանդիսացել է Հայոց Եկեղեցին էկումենիկ հարցերում առաջնային նշանաբանը:

Այս գաղափարը, դարերով առաջնորդելով հայ Եկեղեցականին, մղել է նրան համազործակցելու քոյլ Եկեղեցիների հետ թե՛ ազգային խնդիրները լուծելիս և թե՛ Եկեղեցու առաքելությունն իրագործելիս:

Նման լայնախոր մտածողությունն էր, որ 19-րդ դարի հայ հոգևորականների համաստեղությանը մղեց հաղորդակցվելու Արևմուտքի հոգևոր-աստվածաբանական մտքին և այն շաղախելու իրենց ավանդական հոգևոր արժեքներին ու վերակենդանացնելու դրամք նոր ոգով և մտածողությամբ:

Անշուշտ, այս գաղափարն այսօր ևս առաջնորդող է Հայ Եկեղեցում: Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցու 132-րդ գահական արդեն իսկ իր երկամյա գործունեության մեջ, ի թիվս այլ Եկեղեցաշեն ու ազգօգուտ գործերի, առանձնակի կարևորություն է ընծայում էկումենիկ հարաբերություններին՝ հիմնված փոխադարձ հարգանքի և երկողմանի համազործակցության սկզբունքների վրա, որոնք տեղի են ունենում փոխադարձ այցելությունների և կազմակերպված գիտաժողովների, ուսումնական-հրատարակչական, ինչպես նաև բարեգործական ծրագրերի իրականացման միջոցով:

Անդրադառնպով Վեհափառ Հայրապետի անցյալ երկու տարիների միջնեկեղեցական գործունեությանը՝ վատահրոն կարող ենք արձանագրել, որ այն խարսխված է Հայրապետական անդրանիկ կոնդակի հետևյալ տողերի վրա. «Գործուն մասնակցութիւն ունենալ միշելեղեցական կեանքում հաւատարիմ համայն աշխարհում խաղաղութեան պահպանման, ժողովուրդների՝ եղբայրական սիրով համագործակցութեան մեր Եկեղեցու աւանդներին: Նոր ժամանակների տարարանոյթ մարտահրաւելների առջև քրիստոնէական քոյլ Եկեղեցիների հետ մեր շանքերը միաւորած, հետևողականորէն իրականացնելու ենք հոգեւորի լոյսով մարդկութեան կեանքի հմաստարման սուրբ առաքելութիւնը՝ յանու Քրիստոնէական սկզբունքների կենսագործմամբ բարու յաղթանակի և համընդհանուր երշանկութեամ»<sup>1</sup>:

<sup>1</sup> Հայրապետական անդրանիկ կոնդակ, «Էջմիածին», 2000 թ., № Բ, էջ 3:

Էկումենիկ շրջանակներում հրամայական դարձած «Միություն բազմազանության մեջ» համադրույթն այսօր տևանելի է այլ Եկեղեցիների հետ Հայ Եկեղեցու հարաբերություններում, որոնք, անշուշտ, բխում են թե՛ մեր և թե՛ մյուս Եկեղեցիների շահերից:

Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին, բացի իր անդամների հոգևոր պահանջները բավարարելուց, դարեր ի վեր պարտականություն է ունեցել պահպանելու նաև գաղյաշխարհի հայության ազգային-հոգևոր Ակարագիրը: Այս պայմաններում առաջանում են մի շարք հարցեր՝ կապված հոգեորության, օտար երկրներում հայ համայնքների իրավունքների պահպանման, ինչպես նաև օտար հասարակություններում ինտեգրացման, միևնույն ժամանակ ազգային ինքնության պահպանման հետ:

Դիտարկելով վերջին երկու տարիների ընթացքում զարգացող գործընթացներ՝ կարող ենք եզրակացնել, որ Վեհափառ Հայրապետն իր էկումենիկ գործունեության մեջ առաջնորդվում է այս գաղափարներով:

Էկումենիկ հարցերում Վեհափառ Հայրապետի նախանձախնդիր Վերաբերմունքի արտահայտությունն է Մայր Աթոռում Միջնակեղեցական Հարաբերությունների Գրասենյակը կյանքի կոչելը՝ Տ. Եզնիկ Եպս. Պետրոսյանի պատասխանատվությամբ:

Խոսելով Վեհափառ Հայրապետի էկումենիկ գործունեության մասին՝ չենք կարող անտեսել նրա նախանձախնդրությունը՝ կապված Հայ Եկեղեցու մասնակցությանը Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին:

ԵՀԽ-ի հետ Հայաստանյաց Առաքելական Եկեղեցին արձանագրել է փոխարակություն համագործակցության երկար տարիների փորձառություն, որը նպաստում է թե՛ Եկեղեցիների միջև աստվածաբանական երկխոսությունների հաստատման ու փոխադարձ վստահության մթնոլորտի ստեղծման և թե՛ բարեգործական մի շարք ծրագրերի իրականացմանը: Անդրադարձ Անդրադարձ ԵՀԽ-ի հովանավորությամբ կատարվող միջոցառումներին՝ անվերապահորեն պետք է նշել, որ Հայ Եկեղեցին գործուն կերպով մասնակցում է ԵՀԽ-ի ծիրից ներս տեղի ունեցող բոլոր աստվածաբանական երկխոսություններին, որոնց ընթացքում շշափելի արդյունքներ են արձանագրվել Ուղղափառ Եկեղեցիների հետ բանակցությունների ընթացքում:

ԵՀԽ-ի հետ համագործակցության նոր փուլ է սկսվել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի ԵՀԽ Կլոր Սեղամի Հայաստանյան գրասենյակի գործունեությամբ, որն էլ՝ ավելի է ծավալվում Գարեգին Բ Հայրապետի քաջալերանքով:

Այս և նախորդ ծրագրերն ավելի ամրապնդելու և զարգացնելու նպատակով անցած երկու տարիների ընթացքում տեղի ունեցան երկկողմանի այցելություններ ԵՀԽ գլխավոր քարտուղար Կոնքար Ռայզելի և Ամենայն Հայոց Կաթողիկոսի միջև՝ համապատասխանաբար 2000 թվականի սեպտեմբեր և 2001 թվականի փետրվար ամիսներին: Անդրադարձ ԵՀԽ-ին Հայ Առաքելական Եկեղեցու մասնակցությանը, Վեհափառ Հայրապետն ընդգծեց, որ որպես Ամենայն Հայոց Կաթողիկոս առանձնակիրոր է արժևորում Էկումենիկ շահութամբ, որին միտված է Մայր

Աթոռ Ս. Էջմիածնի Միջնեկեղեցական Հարաբերությունների Գրասենյակի գործությունը, և Բավաստեց Հայոց Եկեղեցու պատրաստակամությունը ԵՀԽ-ի հետ հարաբերությունների զարգացման գործում:

Վեհափառ Հայրապետն անձամբ կարևորում է ԵՀԽ-ի Կլոր Սեղանի և ECLOF գրասենյակները՝ հայ ժողովրդին բերող նպաստի համար:

Այսօր, որպես այս համագործակցության արդյունք, վերոնշյալ երկու բարեգործական կազմակերպություններն իրականացրել են մի շարք ծրագրեր, որոնք միտված են Հայաստանի ընկերային տնտեսական վիճակի բարելավմանը և զարգացմանը:

Հայ ժողովրդը կարևորում է նաև այն հանգամանքը, որ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդը դասվում է այն կազմակերպությունների շարքը, որոնք դատապարտում են 1915 թվականի Հայոց Մեծ եղեռնը:

Արժանարիշատակ է 2001 թվականին Շաղկաձորում տեղի ունեցած Եվրոպական Եկեղեցիների Խորհրդի «Եկեղեցիները երկխոսության մեջ» կոմիտեի և Արևմտյան ու Արևելյան վանականների հանդիպման կազմակերպումը: Ամենայն Հայոց Գարեգին Բ Հայրապետի գահակալության ընթացքում աշխատացել են հատկապես Ուղղափառ քոյլ Եկեղեցիների հետ միջնեկեղեցական հարաբերությունները, որոնք իրականացվում են Հայրապետական այցելությունների և համատեղ հայտարարությունների ընդունմամբ, ինչպես նաև աստվածաբանական գիտաժողովների կազմակերպմամբ: Թե՛ Հայրապետական այցելությունների և թե՛ Վեհափառ Հայրապետի օրինությամբ իրականացված բոլոր միջոցառումների ընթացքում հրամայական են կապերի ամրապնդում և զարգացումը: Այս հարցում անհրաժեշտ է անդրադառնալ, որ Եկումենիկ շրջանակներում Ուղղափառ ընտանիքը Աերկայացնող բոլոր Եկեղեցիները, այդ թվում Հայ Եկեղեցին, կարևորում են միջնեկեղեցական շրջանակներում քաղաքական, տնտեսական, աստվածաբանական և բարոյական խնդիրներում համատեղ Ուղղափառ դիրքորոշման հստակեցումն ու արտահայտումը, որը նպաստելու է ոչ միայն Ուղղափառ քրիստոնությանը, այլև համընդհանուր քրիստոնյա աշխարհին: Ուստի մեր Եկեղեցու համար կարևոր են 1965 թվականին Ադիս Աբեբայում տեղի ունեցած հինգ Արևելյան Ուղղափառ Եկեղեցիների միջև բանակցությունները և համատեղ աստվածաբանական հոչակագրի ընդունումը, ինչպես նաև Ուղղափառ Եկեղեցու ոչ-քաղկեդոնական և քաղկեդոնական ընտանիքների միջև բանակցությունները և դրանց ընթացքում աստվածաբանական և ընկերային-քաղաքական կյանքին առնչվող հարցերի շուրջ ձեռք բերված որոշումներն ու համաձայնագրերը<sup>2</sup>:

Վեհափառ Հայրապետն արդին իսկ իր երկամյա գործունեության ընթացքում բավականին լուրջ Աերդրում ունի իր երջանկահիշատակ նախորդների սկսած՝ միությանը և համագործակցությանը տանող քայլերում: Այս ընթացքում առանձնա-

<sup>2</sup> Christine Chaillot and Alexander Belopopsky, Towards Unity The Theological Dialogue between the Orthodox Church and Oriental Orthodox Churches, Geneva, 1998.

կիորեն լուրջ ձեռքբերումներ են արձանագրվել Ռուս, Ղատի, Եթովպական, Ռումին և Վրաց Ուղղափառ Եկեղեցիների հետ հարաբերություններում:

2000 թվականի մայիսի 9-ից 12-ը Ամենայն Հայոց Հայրապետի Վրաստան աշ-ցեղությունը՝ Վրաց Ուղղափառ Եկեղեցու պետ Խլիա Բ-ի հրավերով, և 2000 թվականի սեպտեմբերի 18-21-ը Ռումինիա կատարած այցելությունը՝ Ռումին Ուղղափառ Եկեղեցու պետ Թեոփուլիս Ա-ի հրավերով, Էկան Աշանակություն ունեցան այս Եկեղեցիների հետ Հայ Եկեղեցու հարաբերությունների համար: Այս համագործակցության զարգացումը բխում է այդ Եկեղեցիները ներկայացնող թե՛ ժողովուրդների և թե՛ երկրների շահներից: Ուղղափառ Եկեղեցու հետ հարաբերություններում, սակայն, բուռն կերպով զարգանում են հատկապես հայ-ռուսական Եկեղեցական հարաբերությունները:

Այսօր այս երկու Եկեղեցիների առջև ծառացել են մի շարք համընդհանուր խնդիրներ, որոնք կապված են Եկեղեցու վերակենսականացմանը, հոգևոր արժեքների վերաբարստատմանը, Ուղղափառ հավատքի ամրապնդմանը, տարածաշրջանում խաղաղության հաստատմանը, ընկերային բազում հարցերի լուծմանն ու աղանդների և ոչ-քրիստոնեական ուսմունքների դեմ պալքարին:

Վեհափառ Հայարապետու ոուս-հայկական Եկեղեցական հարաբերություններին զարկ տալու նպատակով արդեն իսկ մի քանի Հայրապետական այցելություններ է կատարել Ռուս Ուղղափառ Եկեղեցու պետին, ստորագրել համատեղ հայտարարություններ, ինչպես նաև օրինակ աստվածաբանական բանակցություններ սկսելու նախաձեռնությունները: Այս հարցում արժանաբիշատակ են 2000 թվականի հունիսի 11-ին Պետերբուրգի Ս. Կատարինե հայկական Եկեղեցու վերաօժնան և նոյն թվականի օգոստոսի 17-ին Մոսկվայի Ս. Ամենափրկիչ Եկեղեցու բակում հայկական խաչքարի տեղադրման արարողությունները՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս, Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Երկրորդի և Համայն Ռուսիի Պատրիարք Ալեքսի Երկրորդի բարձր նախագահությամբ:

Այժմ երկու Եկեղեցիների միջև նմանում են աստվածաբանական բանակցություններ, որոնք սկսելու համաձայնություն ձեռք բերվեց 2000 թվականի փետրվարի 29-ից մարտի 3-ը Ռուսաց Պատրիարքի, Ամենայն Հայոց Հայրապետի Մոսկվա կատարած այցելության ժամանակ: Այս հարցին էր նվիրված և Ռուս Եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի պատասխանատու Կիրիլ միտրոպոլիտի և Հայ Եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների պատասխանատու Եղմիկ եպս. Պետրոպավլի 2000 թվականի հունիսի 6-ի հանդիպումը<sup>3</sup>: Համաձայնությունների տրամաբանական շարումակությունը եղան 2001 թվականի փետրվարի 13-ից 15-ը Ս. Էջմիածնում տեղի ունեցած հայ-ռուսական Եկեղեցական բանակցությունները, որոնք ավարտվեցին համատեղ հայտարարությամբ, ուր երկու Եկեղեցիների հոգևորականները կարևորեցին Եկեղեցու էկամ դերի ամ-

<sup>3</sup>Տես՝ «Էջմիածն», 2000 թ., № Ե, էջ 107 և 109:

րապետումը հասարակական կյանքում կապված քաղաքական, տնտեսական, երիտասարդությանը և այլ խնդիրներին առնչվող հարցերում:

Անշուշտ, այս ամենն իրենց շարունակությունն են գտնելու և կյանքի են կոչվելու պապագայում, որոնք գալու են նպաստելու երկու Եկեղեցիների միջև կապերի զորացմանը:

Զուգահեռաբար Հայ Եկեղեցին շարունակում է բարեկամական հարաբերությունների մեջ մնալ Ղպտի և Եթովպական Եկեղեցիների հետ: Սա կրկին անգամ ամրապնդվում է Վեհափառ Հայրապետի 2000 թվականի հոկտեմբերի 12-ից 21-ը Եզիպտոս և Եթովպահա կատարած այցելությունների ընթացքում, որը առ համարդարձությամբ ունեցավ համապատասխանաբար Ղպտի Ուղղափառ Եկեղեցու պետ Շնորհական Գ-ի, Եթովպահայի Թնամիեր Ուղղափառ Եկեղեցու պետ Արքունա Պառլուսի և Ալեքսանդրիայի հովանու Պատրիարք Պետրոս Է-ի հետ:

Արդյունավետ համայնքումների և գրուցման ընթացքում Հայրապետերը բազմից շեշտել են միմյանց միջև գոյություն ունեցող ավանդական բարեկամական հարաբերությունները, որոնք նպաստում են ընդհանուր քրիստոնեական շրջանակներում Ուղղափառ Եկեղեցու վկայության ուժեղացմանը և էկումենիկ շրջանակներում Ուղղափառ Եկեղեցիների մասնակցության ընդլայնմանը: Քույր Եկեղեցիների միջև բարեկամական կապերի ամրապնդման հարցում հատկապես արժանահիշատակ է Նորին Սրբություն Շնորհական Պապի և Վեհափառ Հայրապետի ստորագրած համատեղ հայտարարությունը, որում հավաստվում է իրենց պատրաստակամությունը համագործակցելու ի շահ քույր Եկեղեցիների հոգևոր զարթոնքի և զորացման:

Վեհափառ Հայրապետի երկամյա հոգևոր գործունեության ընթացքում գործուն կերպով զարգանում են հարաբերությունները նաև Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու հետ:

2000 թվականի նոյեմբերին հանդիսավոր արարողությամբ Հռոմի Ս. Պետրոս տաճարում Վեհափառ Հայրապետին հանձնվեցին Ս. Գրիգոր Լուսավորչի մասունքները: Անշուշտ, այս պատմական իրադարձությունը մեկ քայլով ևս երկու Եկեղեցիներին մոտեցմում է միմյանց և ամրագրում արդեն իսկ երշանկահիշատակ Վազգեն Ս. և Գարեգին Ս. Ամենայն Հայոց Հայրապետերի օրոք ակաված համագործակցության գործընթացը:

Բողոքական և բարեկարգյալ Եկեղեցիներից բավականին սերտ են հարաբերությունները Անգլիկան և Դամիայի Լութերական Եկեղեցիների հետ, որոնց ներկայացուցիչները Հայաստանում ուղղակիորեն համագործակցում են Ամենայն Հայոց Կաթողիկոսության հետ:

**ՎԱՐԴԳԵՍ ՍԱՐԿԱՎԱԳ ՄԱՆՈՒԿՅԱՆ**  
ՄԱՅՐ ԱՖ-Ջ. Ս. ԷՉՄԻԱՅՆԻ  
ՄԻԶԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱԺԻՆ